



Կարգապահական գործ թիվ ԿԳ-18143

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2019 թվականի հունիսի 04-ի թիվ 125-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ ԿԳ/78-Ա

**ՓԱՍՏԱԲԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (այսուհետ նաև՝ Պալատ) խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ), նիստը նախագահող՝ Նելլի Հարությունյանի, Խորհրդի անդամներ՝ Հրանտ Անանյանի, Մելանյա Առուստամյանի, Սիմոն Բաբայանի, Գայանե Դեմիրջյանի, Կարեն Մեծլումյանի, Կարեն Սարգսյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի, քննության առնելով փաստաբան Քրիստինե Գալստյանին (արտոնագիր թիվ 1895) (այսուհետ նաև՝ Պատասխանող) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Ձ Ե Ց՝

1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.

Քաղաքացի Գայանե Պետրոսյանը (այսուհետ նաև՝ Դիմող), դիմելով Պալատ հայտնել է, որ փաստաբան Քրիստինե Գալստյանի հետ 21.04.2016թ. կնքել է փաստաբանական ծառայություն մատուցելու պայմանագիր և վճարել 200.000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամ, այնուհետև՝ յուրաքանչյուր հայցի կազմման համար վճարել է հավելյալ՝ առանց որևէ փաստաթղթի, 40.000 (քառասուն հազար) ՀՀ դրամ:

Դիմողը նշել է, որ փաստաբան Քրիստինե Գալստյանի գործողությունների արդյունքում սեփականության իրավունքի զրկման վտանգի տակ է, քանի որ թույլ տրված տեխնիկական սխալների և անլիարժեք իմացության պատճառով մերժվել են դատարաններին ներկայացրած հայցադիմումները:

Դիմողը հայտնել է, որ փաստաբան Քրիստինե Գալստյանը ներգրավված է կոռուպցիոն շղթայում, ինչի արդյունքում ինքը վնաս է կրել:

Դիմողը խնդրել է զրկել Պատասխանողին արտոնագրից, ինչպես նաև վերադարձնել իր կողմից վճարված գումարները:

2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի նախագահի 19.11.2018թ. թիվ 403-Ա/ԿԳ-18143 որոշմամբ փաստաբան Քրիստինե Գալստյանի

(արտոնագիր թիվ 1895) նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրի (**այսուհետ նաև՝ Կանոնագրի**) 2.7.2, 3.1.8 և 3.5.5 ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով:

21.11.2018թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Հովհաննես Մաթևոսյանին:

3. Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.

3.1. Դիմողի համառոտ բացատրությունը.

Դիմողի կողմից 14.12.2018թ. ներկայացվել է բացատրություն, որով վերջինս հայտնել է, որ 2016 թվականից սկսած փաստաբան Քրիստինե Գալստյանը որպես փաստաբան 6 անգամ ձախողել է հայցվորի դիմումները՝ թերություններ թույլ տալու պատճառով: Համապատասխան փաստաթղթերը լիարժեք ձեռք չի բերել, մասնավորապես իր ամուսնու Թադևոս Կարապետյանի անշարժ գույքի 0153060 և բռնադատվածի իրավունքով ստացված 474442 վկայականները, դատարանում միջնորդություն չի ներկայացրել փորձաքննության և տեղատեսության, չի ներկայացրել հայցի լրացում: Շարժական գույքի ՎԱԶ 2108 34N0918 պ/հ 1/2-ի պահանջի մասով գործում բացակայում է գրավոր համաձայնագիրը, որովհետև ՃՈ-ում ավտոմեքենան գրանցելու համար պահանջում են փաստաթուղթ:

Դիմողը հայտնել է նաև, որ դատավարությունների ժամանակ զրկված է եղել խոսքի իրավունքից, ինքը փաստաբան Քրիստինե Գալստյանից պահանջել է խոսքի իրավունք, սակայն փաստաբանն ասել է, որ «ժամանակը չէ», «դատավորը ցուցմունքներ կվերցնի»:

Դիմողը նշել է նաև, որ ինքը վճարել է Քրիստինե Գալստյանին, սակայն պետական տուրքը չվճարելու, կտրոն չունենալու պատճառով հայցը մերժվել է դատարանի կողմից: Թերությունների պատճառով մերժվել է իր հայցվորի իրավունքը դատարան դիմելու, քանի որ հասցեները ճիշտ չգրելու պատճառով բողոքները չեն ստացել իր ամուսնու ժառանգները, Կարապետ անունը գրել է Կարեն: 2016 թվականից սկսած փաստաբան Քրիստինե Գալստյանը բազում անգամ կանչել է Երևան, Օհանավանից Երևան ինքը վճարել է 1500 դրամ, սակայն հայցը պատրաստ չի եղել, որպեսզի ինքն ստորագրի, շատ անգամ իրենք հանդիպել են փողոցում:

Խորհրդի նիստին ներկայացել են Դիմողը և իր ներկայացուցիչ Սուսաննա Միշիկի Երեմյանը (**այսուհետ նաև՝ Ներկայացուցիչ**) :

Ներկայացուցիչը նշել է, որ Քրիստինե Գալստյանը պարտավոր էր Գայանե Պետրոսյանին ուղղորդել ստանալու նոտարական գրասենյակից ժառանգության պարտադիր բաժնի վկայական, որը կլիներ գործի հիմք, ինչպես նաև սխալ հիմքով է ուղղորդել Գայանե Պետրոսյանին:

Ներկայացուցիչը հայտնել է նաև, որ կարծում է, որ Պատասխանողը կոռուպցիոն շղթայում է ներգրավված և անգամ բացահայտ կոռուպցիայի առաջարկ է արել Գայանե Պետրոսյանին: Ինչպես նաև փաստաբանը բողոքում գրել է սխալ հասցե, սխալ անուն և որ գործն առաջին ատյան ուղղորդելը եղել է փաստաբանի գերագույն սխալը, քանի

որ անհրաժեշտ էր դիմել վարչական դատարան՝ պահանջով, շտկել կադաստրում եղած թվային վավերացման սխալը, քանի որ սեփականության իրավունքի վկայականում սխալ է եղել գրված, քանի որ վկայականում գրված է եղել կիսակառույց, մինչդեռ կառույց չի եղել կառույց կառուցվել է 2000 թվականից սկսված: 2002 գրանցել են ամուսնու անունով:

Դիմողը նշել է, որ ունեցել է երկու փաստաթան, առաջինը եղել է Քրիստինե Գալստյանը, իսկ երկրորդը եղել է հանրային պաշտպան, ով 2018 թվականին վարչական դատարան ներկայացրել է հայցադիմում, որը վերադարձվել է:

Պատասխանելով Խորհրդի անդամների հարցերին Դիմողի ներկայացուցիչը պնդել է, որ սույն կարգապահական գործը պետք է քննել բացառապես այն շրջանակում, թե արդյոք Պատասխանողը դիմել է վարչական դատարան, թե՛ ոչ:

3.2. Պատասխանողի համառոտ բացատրությունները.

30.10.2018թ. Պատասխանողը ներկայացրել է բացատրությունը, որտեղ նշել է, որ ինքը բարեխղճորեն է կատարել իր կողմից ստանձնած պարտավորությունները, կատարել է հանձնարարության կատարման հետ կապված բոլոր անհարժեշտ գործողությունները, հանդես է եկել ՀՀ բոլոր դատական ատյաններում՝ ընդհանուր իրավասության առաջին ատյանի, ՀՀ վերաքննիչ քաղաքացիական և ՀՀ վճռաբեկ դատարաններում, նոտարական գրասենյակում, ներկայացրել է նրա շահերը, գործի ելքի վերաբերյալ որևէ արդյունք կամ երաշխավորություն չի տվել, իսկ Դատարանի կողմից կայացված դատական ակտի համար ինքը պատասխանատվություն չի կարող կրել: Իսկ ինչ վերաբերում է դիմումում նշված կոռուպցիոն շղթային, գրագիտության հետ կապված մեկնաբանություններին, ապա՝ դրանք անհիմն են:

Փաստաթան Քրիստինե Գալստյանը նշել է, որ 08.11.2017թ. առաջին ատյանի կողմից կայացված վճռով Գայանե Պետրոսյանի հայցը բավարարվել է մասնակի և ճանաչվել է հայցվոր Գայանե Պետրոսյանի իրավունքը ՀՀ Արագածոտնի մարզի Օհանավան համայնքում գտնվող 188-008 կադաստրային ծածկագրով 2.750 քմ պտղատու այգու, ՎԱԶ-2108 մակնիշի 33 ՕՕ 386 պ/հ տրանսպորտային միջոցի, ՎԱԶ-2108 մակնիշի 34 NQ 918 պ/հ տրանսպորտային միջոցի 1/2 նկատմամբ: 05.12.2017թ. վճռի չբավարարված մասի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ դատարան ներկայացվել է վերաքննիչ բողոք և միջնորդություն պետական տուրքի գծով արտոնություն տրամադրելու վերաբերյալ: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանում մասնակցել է գործի քննությանը: 23.04.2018թ. ՀՀ վերաքննիչ դատարանի կողմից վերաքննիչ բողոքը մերժվել է ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 08.11.2017թ. թիվ ԱՐԱԴ/0762/02/16 վճիռը թողնվել է անփոփոխ՝ օրինական ուժի մեջ: Այնուհետև՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի կայացրած որոշումը բողոքարկվել է ՀՀ վճռաբեկ դատարան: 21.08.2018թ. ՀՀ վճռաբեկ դատարանը թիվ ԱՐԱԴ/0762/02/16 քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 23.04.2018 թվականի որոշման դեմ Գայանե Պետրոսյանի բերած վճռաբեկ բողոքը թողել է առանց քննության:

Փաստաթան Քրիստինե Գալստյանը նշել է, որ դիմումում նշված 40.000 ՀՀ դրամն առանց փաստաթղթային ձևակերպման վճարելը, նույնպես չի համապատասխանում իրականությանը, իսկ Գայանե Պետրոսյանին փաստաթանական ծառայությունները մատուցել է Պայմանագրով նախատեսված

գումարի շրջանակներում, ավելին, հաշվի առնելով վերջինիս տարիքը և միայնակ լինելու հանգամանքը հանձնարարության կատարման հետ կապված այլ ծախսերը կատարել է իր հաշվին (հայցադիմումի պետական տուրքը, հարցումները, պարզաբանումները, փոստային վճարումները, մարզերում գտնվող արխիվներում փաստաթղթերի հայտնաբերման համար այցելությունները, ՀՀ Ոստիկանության Աշտարակ քաղաքի վարչության անձնագրային բաժնի պետի և աշխատակիցների հետ պաշտոնական հանդիպումը, ՀՀ անշարժ գույքի պետական կոմիտե կատարված հարցումների վճարումներ և բազմաթիվ այլ գործողություններ կապված հանձնարարության կատարման հետ, ինչպես նաև հարկային վճարումներ), հետևաբար, Գայանե Պետրոսյանի կողմից ամբողջ վճարված գումարը վերադարձնելու պահանջն անհիմն է, քանի որ ինքն արդեն իսկ երկու տարվա ընթացքում կատարել է Պայմանագրով ստանձնած իրավական օգնություն ցույց տալու իր պարտականությունը:

18.01.2019թ. Պատասխանողը ներկայացրել է բացատրություն, նշելով, որ երկրորդ անգամ կողմերին վճռաբեկ բողոքն ուղարկված լինելը հաստատող ապացույցները ձեռք բերելու և կարգապահական գործի շրջանակներում տրամադրելու համար, 10.12.2018թ. դիմում է ներկայացրել ՀՀ վճռաբեկ դատարանի աշխատակազմի ղեկավարին: 04.12.2018 թվականի ՀՀ վճռաբեկ դատարանի աշխատակազմի ղեկավարի գրությամբ ուղարկվել է թիվ ԱՐԱԴ/0762/02/16 քաղաքացիական գործով 18.07.2018թվ-ին ներկայացված վճռաբեկ բողոքին կից ներկայացված փոստային անդորրագրերի պատճենները՝ ինը թերթից: Կից ներկայացված փոստային անդորրագրերի պատճենները հաստատում են կարևոր նշանակություն ունեցող այն փաստը, որ կատարված բովանդակային փոփոխություններով վճռաբեկ բողոքը քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով ուղարկվել է վերոհիշյալ քաղաքացիական գործով յուրաքանչյուր կողմին: Պատասխանողը նշել է նաև, որ ՀՀ վճռաբեկ դատարանը հաշվի չի առել այն հանգամանքը, որ թիվ ԱՐԱԴ/0762/02/16 քաղաքացիական գործով առաջին ատյանի դատարանի 11.10.2016թ. որոշմամբ պատասխանող՝ Հասմիկ Կարապետյանը հանվել է գործի վարույթից և կից ներկայացրել է www.datalex.am կայքից թիվ ԱՐԱԴ/0762/02/16 քաղաքացիական գործով կայացված վճռից կատարված պատճենը:

Պատասխանողը նշել է նաև, որ 14.12.2018թ. Գայանե Պետրոսյանի կողմից ներկայացված բացատրությամբ նշված հանգամանքները ևս անհիմն են և չեն համապատասխանում իրականությանը, որոնց վերաբերյալ ինքն արդեն իսկ 30.10.2018թ. ներկայացրել է բացատրություն և ապացույցներ:

Պատասխանողը Խորհրդի նիստին ներկայացել և հայտնել է, որ Գայանե Պետրոսյանը իրեն Դիմել է 2015 թվականին, հայցը ներկայացրել է 25.04.2016 թվականին Աշտարակ քաղաքի դատարան, ինչպես նաև ներկայացրել է հայցի ապահովում կիրառելու մասին միջնորդություն, որը 26.04.2016 թվականին բավարարվել է, նույն օրը դիմել է դատարանի աշխատակազմին և հայցի ապահովման և վարույթ ընդունելու մասին որոշումների հետ միասին դիմել է նոտարական գրասենյակ, որտեղ ժառանգության գործընթացը կասեցվել է, այսինքն՝ ինքը չի գրկել Դիմողին իր պարտադիր բաժնի իրավունքից: Հայցի ընթացքում ներկայացրել է պահանջ ամուսնության ընթացքում ձեռք բերված գույքի 1/2-ի նկատմամբ, դատակ նիստի ընթացքում վկայություն է տվել նաև գյուղապետը, որ այդ թվականներին

շինություն չի եղել, երբ որ ինքը գյուղապետ է եղել, բավորները նույնպես եկել են դատարան, այսինքն՝ բոլոր ապացույցները:

Պատասխանողը նշել է նաև, որ դատարանը հայցը բավարարել է մասնակի, ներկայացրել է վերաքննիչ բողոք, որը մերժվել է, այնուհետև՝ դիմել է Վճռաբեկ դատարան, որը առաջին անգամ վերադարձրել են, իսկ երկրորդ անգամ թողել են առանց քննության, մինչդեռ իր կողմից շտկվել էին բոլոր թերությունները: Պատասխանողը հայտնել է նաև, որ վճռաբեկ դատարանը պատշաճ չի ուսումնասիրել, քանի որ եթե պատշաճ ուսումնասիրեր կտեսներ, որ առաջին ատյանի վճռում նշված է, որ Պատասխանող Հասմիկ Կարապետյանը հանվել էր գործի վարույթից:

Պատասխանողը նշել է, որ վարչական դատարան դիմելու կարիք չկար, քանի որ սեփականության իրավունքը գրանցված էր, բացի դրանից այն վկայականը, որը նշում են դա ձեռք է բերել 1995 թվականին, եղբոր հետ փոխանակման համաձայնագրով, որը գյուղապետի ներկայացմամբ է կատարվել, հետո վկայականում նշված է, որ շինությունը կառուցվել է 1998 թվականին և Կառավարության որոշման հիման վրա տվել են սեփականության վկայական, իսկ իրենց ամուսնությունը գրանցվել էր 1996 թվականին: Ինչպես նաև վիճարկվում էր 2002 թվականին գրանցված սեփականության վկայական, որի համար սահմանված է բողոքարկման երկամսյա ժամկետ, ուստի գործել է վստահորդի շահերից ելնելով:

Պատասխանելով Խորհրդի անդամների հարցերին վարչական դատարան դիմելու վերաբերյալ, Պատասխանողը նշել է նաև, որ իր վստահորդը նման հանձնարարություն իր վստահորդը իրեն չի տվել, բացի այդ լրացել էր վարչական դատարան դիմելու ժամկետները:

3.3. Վկաների ցուցմունքները.

Սույն կարգապահական վարույթի շրջանակներում վկաներ չեն հրավիրվել:

4. Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը Խորհրդին.

21.01.2019թ. կարգապահական վարույթի գործը նախապատրաստող անձ Հովհաննես Մաթևոսյանը կազմել է եզրակացություն:

22.01.2019թ. գործը հանձնվել է Խորհրդին:

Խորհրդի նիստերը տեղի են ունեցել 2019 թվականի փետրվարի 27-ին, ժամը՝ 18:30-ին, 2019 թվականի հունիսի 04-ին, ժամը՝ 18:30-ին, ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.

Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» (այսուհետ նաև՝ Կարգ) 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:

Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը՝

1. Դիմողի և փաստաբան Քրիստինե Գալստյանի միջև 21.04.2016թ. կնքվել է փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր: Պայմանագրի առարկան կազմել է՝ վստահորդի շահերի ներկայացումը ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեում, դատական բոլոր ատյաններում, ԴԱՀԿ ծառայությունում և այլ պետական և ոչ պետական մարմիններում, որպես ներկայացուցիչ և կատարել սույն հանձնարարության հետ կապված այլ աշխատանքներ: Պայմանագրի գինը սահմանվել է՝ 200.000 ՀՀ դրամ:

Նշված փաստերը հաստատվում են 21.04.2016թ. փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագրով, Դիմողի և Պատասխանողի բացատրություններով:

2. Պատասխանողը Դիմողի անունից ներկայացրել է հայցադիմում և 08.11.2017թ. ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից կայացված վճռով Գայանե Պետրոսյանի հայցը բավարարվել է մասնակի և ճանաչվել է հայցվոր Գայանե Պետրոսյանի իրավունքը ՀՀ Արագածոտնի մարզի Օհանավան համայնքում գտնվող 188-008 կադաստրային ծածկագրով 2.750 քմ պտղատու այգու, ՎԱԶ-2108 մակնիշի 33 ՕՕ 386 պ/հ տրանսպորտային միջոցի, ՎԱԶ-2108 մակնիշի 34 ՈՂ 918 պ/հ տրանսպորտային միջոցի 1/2 նկատմամբ:

3. Պատասխանողը 05.12.2017թ. վճռի չբավարարված մասի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ դատարան ներկայացրել է վերաքննիչ բողոք և միջնորդություն պետական տուրքի գծով արտոնություն տրամադրելու վերաբերյալ: 23.04.2018թ. ՀՀ վերաքննիչ դատարանի կողմից վերաքննիչ բողոքը մերժվել է ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանի 08.11.2017թ. թիվ ԱՐԱԴ/0762/02/16 վճիռը թողնվել է անփոփոխ՝ օրինական ուժի մեջ:

4. ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի կայացրած որոշումը Պատասխանողը բողոքարկել է ՀՀ վճռաբեկ դատարան: Պատասխանողի կողմից 25.05.2018թ. ներկայացված վճռաբեկ բողոքը 04.07.2018թ. որոշմամբ վերադարձվել է և սահմանվել է հնգօրյա ժամկետ նշված թերությունները շտկելու և վճռաբեկ բողոքը կրկին ներկայացնելու համար: 18.07.2018թ. Պատասխանողը կրկին ներկայացրել է վճռաբեկ բողոք: 01.08.2018թ. ՀՀ վճռաբեկ դատարանը թիվ ԱՐԱԴ/0762/02/16 քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 23.04.2018 թվականի որոշման դեմ Գայանե Պետրոսյանի բերած վճռաբեկ բողոքը թողել է առանց քննության:

Նշված փաստերը հաստատվում են գործում առկա ապացույցներով, այդ թվում՝ 08.11.2017թ. թիվ ԱՐԱԴ/0762/02/16 քաղաքացիական գործով ՀՀ Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանի վճռի, ՀՀ վճռաբեկ դատարանի որոշման պատճեններով, Դիմողի և Պատասխանողի բացատրություններով, «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգից տրված թիվ ԱՐԱԴ/0762/02/16 քաղաքացիական գործի նյութերով:

6. Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքի համաձայն՝ փաստաբան Քրիստինե Գալստյանի (արտոնագիր 1895, ստացված՝ 25.04.2015թ.) նկատմամբ 2015-2019թթ. ընկած ժամանակահատվածում կարգապահական վարույթ չի հարուցվել (չհաշված սույն կարգապահական գործը):

7. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Քրիստինե Գալստյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ.

Կանոնագրի 2.7.2 ենթակետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:

Կանոնագրի 3.1.8 ենթակետի համաձայն՝ փաստաբանն իրավական օգնություն ցույց տալու հանձնարարությունը չպետք է ընդունի, եթե զբաղվածության կամ որևէ այլ պատճառով չի կարող ապահովել հանձնարարության բարեխիղճ և ժամանակին կատարումը:

Կանոնագրի 3.5.5 ենթակետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է ժամանակին, գիտակցաբար և ջանասիրաբար խորհուրդ տալ և պաշտպանել իր վստահորդին և հանդես գալ նրա անունից:

Վերլուծելով նշված կանոնները խորհուրդը գտնում է, որ սույն գործի փաստերի լույսի ներքո անհրաժեշտ է դրանք դիտարկել համակցության մեջ: Համադրելով նշված կանոնները խորհուրդը գտնում է, որ դրանք համակցությամբ մեկնաբանելիս բացահայտվում է փաստաբանի գործունեության բարեխիղճության և հանձնարարության պատշաճ և լրիվ կատարման իրավական բովանդակությունը:

Նշված կանոններով փաստաբանի համար սահմանվում են պարտականություններ, այն է՝ ելնել վստահորդի նպաստավոր շահերից և բարեխիղճորեն և ժամանակին պաշտպանել վստահորդի իրավունքներն ու օրինական շահերը: Նշվածը ենթադրում է, որ փաստաբանը պետք է կիրառի օրենքով չարգելված բոլոր հնարավոր միջոցները վստահորդի շահերը լավագույնս պաշտպանելու համար: Ընդ որում, խոսքը վերաբերում է այնպիսի գործողությունների կատարմանը, որոնք փաստացի արդյունավետ են վստահորդի իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության պատշաճ ներկայացման համար: Ձևական բնույթի գործողությունների կատարումը, որոնք, թեկուզև օրինական են, սակայն տվյալ պարագայում օգտակար և արդյունավետ չեն վստահորդի շահերի պաշտպանության համար, չի կարող համարվել փաստաբանի մասնագիտական բարեխիղճության ապացույց: Փաստաբանի մասնագիտական բարձր որակավորումը և իր պարտականությունների բարեխիղճ կատարումը փաստաբանության ինստիտուտի հանրային ընկալման առանցքային տարրերից են, որոնց բացակայությունն արժեզրկում է փաստաբանի՝ որպես իրավապաշտպան և արդարադատության

կայացմանը նպաստող գործառույթներ իրականացնող անձի հասարակական նշանակությունը:

Սույն կարգապահական գործի քննության արդյունքում հաստատվել է, որ Պատասխանողի և Դիմողի միջև 21.04.2016թ. կնքվել է փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր, որի առարկան կազմել է՝ վստահորդի շահերի ներկայացումը ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեում, դատական բոլոր ատյաններում, ԴԱՀԿ ծառայությունում և այլ պետական և ոչ պետական մարմիններում, որպես ներկայացուցիչ և կատարել նշված հանձնարարության հետ կապված այլ աշխատանքներ:

Պատասխանողը Դիմողի անունից հայց է ներկայացրել դատարան՝ համատեղ կյանքի ընթացքում ձեռք բերված գույքի 1/2 նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու պահանջի մասին: Խորհուրդը արձանագրում է, որ թեև Դիմողի հայցը բավարարվել է մասնակի, սակայն Պատասխանողը պատշաճ ներկայացրել է Դիմողի շահերը առաջին ատյանի դատարանում, մասնավորապես՝ Պատասխանողի միջնորդությամբ կիրառվել է հայցի ապահովման միջոց՝ արգելանք է դրվել Թադևոս Կարապետյանին սեփականության իրավունքով պատկանող՝ ՀՀ Արագածոտնի մարզի Օհանավան համայնքի 12 փողոցի, 1 փակուղու, 4 տուն հասցեում գտնվող բնակելի տան, պտղատու այգու, տնամերձ հողամասի, «Վազ»-2108 մակնիշի 33 ՕՕ 386 պետհամարանիշի ավտոմեքենայի վրա մինչև վճռի կայացումը՝ չի տրամադրվել ժառանգության վկայագրեր:

Ինչ վերաբերում է վճռաբեկ դատարանի բողոքում թույլ տրված սխալներին, ապա ըստ Պատասխանողի ներկայացրած բացատրության կրկին ներկայացված վճռաբեկ բողոքում իր կողմից շտկվել են բոլոր թերությունները և բողոքն ուղարկվել է պատասխանողներին: Ի հավաստումը նշվածի Պատասխանողը ներկայացրել է ՀՀ վճռաբեկ դատարանի աշխատակազմի ղեկավարի գրությամբ ուղարկված փոստային անդորրագրերի պատճենները: Խորհուրդը հարկ է համարում ընդգծել, որ նշված անդորրագրերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ Պատասխանողը պատշաճ ծանուցել է Կարապետ Կարապետյանին, իսկ ինչ վերաբերում է Հասմիկ և Կարեն Կարապետյաններին, ապա Հասմիկ Կարապետյանը գործի վարույթից հանվել է դեռևս 11.10.2016 թվականին, իսկ Կարեն Կարապետյան մասնակցող անձ թիվ ԱՐԱԴ/0762/02/16 քաղաքացիական գործում առկա չէ:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Խորհուրդը գտնում է, որ սույն կարգապահական գործի քննությամբ չի հիմնավորվել Պատասխանողին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի առկայությունը, հետևաբար սույն կարգապահական վարույթը ենթակա է կարճման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39.7. հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի, 39.8. հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության 16.26-րդ կետի, Կարգի 28-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 30-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի պահանջներով՝ Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Քրիստինե Գալստյանի (արտոնագիր թիվ 1895) նկատմամբ Կանոնագրքի 2.7.2, 3.1.8 և 3.5.5 ենթակետերի պահանջների խախտման հարկանիշներով հարուցված թիվ ԿԳ-18143 կարգապահական վարույթը կարճել:

2. Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

Ծանոթություն. *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝

Նելլի Հարությունյան

**04 հունիսի 2019թ.
թիվ ԿԳ/78-Ա
ք. Երևան**